

ձեռը թափալորական գայիսոնը և ասաց իր գահոյքի ներքև կանգնած հովուական պարկը վզից կախած թափալորին.

— Ահա՛ թէ ինչ է անում Աստուած: Մէկին գահն է քարձրացնում, միւսին՝ գահից տապալում:

Եւ ապա իջաւ և հագաւ զարձեալ իր ցնցոտիները:

Թափալորը խոր մտածմունքի մէջ ընկաւ: Այդ խօսքերը նրա վրայ խոր ազդեցութիւն էին գործել: Եւ յանկարծ, մեծ ցնծութեամբ նա բացականչեց.

— Ահա այժմ ես տեսնում եմ Աստծուն:

Փոխ. ն. ձ.

ԲԱՅԻ ԵՂԱՆԱԿՆԵՐՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱՇԽԱՐՀԱԲԱՐՈՒՄ*)

Տեսնենք կը գնամ, կը գնայի ձեռքի գործածութիւնները: Կարելիական եղանակով, ինչպէս տեսանք, եղելութիւնը պատկերացում է ոչ իբրեւ իրական, այլ իբրեւ մտածուած, կարծուած, հնարաւոր, այսինքն այնպիսի որ կարող է լինել, գուցէ, կարելի է լինի: Ուստի այս եղանակով խօսողը ոչ թէ ստոյգ, հաւաստի հաստատութիւն է անում, այլ անստոյգ, մեղմ հաստատութեամբ, քաղաքավարութեամբ, ենթադրելով իր կարծիքն է յայտնում: Մեր կը մասնկիով կազմութիւնների այս նշանակութիւնը շատ պարզ երևում է, երբ հանդիպադրուում են սահմանական եղանակի համապատասխան ժամանակներին: Առնենք նախ քաղադրեալ, ապա պարզ ժամանակները:

1. Օտիւմ. Այս բոլորիս որ խօսում եմ, նա գնում ե, — Երէկ, ժամի 5-ին նա գնում եր (իրական եղելութիւն). **Սերպոր.** Այս բոլորիս որ խօսում եմ, նա գնալիս կը լինի (գնում կը լինի), — Երէկ, ժամի 5-ին նա գնալիս (գնում) կը լիներ (հնարաւոր, կարծուած եղելութիւն. կարող է, կարող էր գնալիս լինել): Շուտ գնա, մայրդ հիմա տանը սպասում ե քեզ, — Շուտ գնա, մայրդ հիմա ասանը քեզ սպասելիս կը լինի: Գնում, կանգնում ենք. . . ամենքս մի ծառի տակ. ես ասում եմ՝ այ ծառ քո անունդ Գրիգոր է. դու էլ, ի հարկէ, ասում կը լինիս՝ Բաղալ է (Պոռ.): Ընկերս պատմում էր, թէ մի օր հիացմունքով էր մտածում այն ժամի ու վայրկեանի մասին, երբ մայրաքաղաքից հեռացած՝ գնում կը լիներ հայրենիքում (Մուրացան):

*) Տե՛ս 1912 թ. № 2.

2. Սահմ. Նա գնացել է Երևան,—Նա գնացել էր Երևան. **Ծնրադր.** Նա գնացած կը լինի Երևան,—Նա գնացած կը լինէր Երևան: Լսած կը լինիս (սահմ. լսել ես). Ես գիտեմ, հաց էլ չես կերած լինիլ (սահմ. չես կերել). Քանի՞ անգամ դու ասած կը լինիս այս խօսքը (սահմ. ասել ես). Այս տեղը մի հարիւր անգամ տեսած կը լինէր (սահմ. տեսել էր. Պոռշ.):

3. Սահմ. Նա այժմ տանն է,—Երէկ, ժամի 5-ին նա տանն էր (իրապէս է՛, էր). Այժմ այնտեղ շատ մարդ կայ,—Երէկ այնտեղ շատ մարդ կար (իրապէս կայ, կար): **Ծնրադր.** Նա այժմ տանը կի լինի. Երէկ, ժամի 5-ին նա տանը կը լինէր. այժմ այնտեղ շատ մարդ կը լինի. Երէկ այնտեղ շատ կը լինէր (կարող է, կարող էր լինել, այդպէս ենթադրում ենք միայն): Գեղումն էլ որտեղ կորած, մոլորած երեխայք կան, այսօր ժամուժը կը լինին (սահմ. ժամումն են). Մին էլ (յանկարծ), կը լինէր կէս գիշեր, որ... (կարող էր լինել. սահմ. կէս գիշեր էր): Որ տասը բարեկամ ունի՞նք (սահմ. իրապէս ունինք), մի քսան էլ թշնամի կու՛նենանք (կարող ենք ունենալ). Հոգեպահուստ բաներ կու՛նենաս (սահմ. ունիս): Ինչի՞ համար ես եկել այս կէս գիշերին. մի գիտէ ինչ փորացաւ կու՛նենաս. խեղճ մայրդ հիմա մեռաւ. տեղդ էլ կը գիտե՞նայ (սահմ. գիտէ՞.—Պո.):

Ինչպէս վերևում դրուած ձևերի մէջ, նոյնպէս և միւս բայերի պարզ ձևերի մէջ կը մասնիկը դրուելով ըզձական եղանակի վրայ տալիս է նրան կարելիական նշանակութիւն: Առնենք նախ այնպիսի օրինակներ, որոնց մէջ կը գնամ ձևը ոչ թէ ապահովի նշանակութիւն ունի, այլ ներկայի, իսկ կը գնայի ձևը համապատասխան կերպով անցեալ է:

4. Սահմ. Շատ քիչ է պատահում աշխարհում այսպիսի բան (եղելութիւնն արտայայտում է իրրե իրական, ստոյգ դատողութիւն): **Ծնրադր.** Շատ քիչ կը պատահի աշխարհում այսպիսի բան (իրրե՛ շատ քիչ կարող է պատահել,—մեղմ հաստատութիւն): Նոյն նշանակութիւնը մնում է և անցեալի համար՝ Շատ քիչ կը պատահէր այսպիսի բան (իրրե կարող էր պատահել): Զուկը ծովում կը մեծանայ (կարող է մեծանալ). Ծաղատի գրածը չի ջնջուիլ (չի կարող ջնջուել): Ուղտը գդալով կը ջրուի՞ (կարելի՞ է ջրել, կարող է ջրուել): Ամեն բանում մեզ ոչով չի կարող հասնել. էջմիածնեցիք մեզ չեն հասնիլ (Պո.—կարելի էր ասել՝ Ամեն բանում մեզ ոչով չի հասնիլ. էջմիածնեցիք էլ մեզ չեն կարող հասնիլ): Մեծ տո՛ւն, կը տանէր (կը տանի) երկու հարիւր հոգի (Պո.—իրրե կարող էր, կարող է տանել): Օրը քանի՞ անգամ է (էր) նա այստեղով գնում գալիս.—օրը մի հինգ անգամ կը գնայ, կը գալ, (կը գնար, կը գար): Հարազատ եղբայրը սիրելի քրոջը

գիր է սովորեցնում, կը մտածէր ամեն օտար աչք (Պռշ.): Ո՞վ կը յաղգնի հրապարակ գալ.—Մենք ի՞նչ կը համարձակուենք բերան բանալ.—Ի՞նչպէս կը յաղգնէր մի ստորին ոստիկան ինքնագլուխ այդքան մեծ պահանջներ անել,—ամեն գիւղում հօ կաշառքով չէր յաջողիլ գործին վերջ տալ. կը պատահէր այնպիսի գիւղ, որ ուղղակի բառացի կը կատարէր նրա պատուէրը.—Ո՞վ կը կասկածէր, որ այդպէս չի լինիլ (Պռ. իբրեւ ռիւ կարող էր կասկածել):

Ես օրինակներ կուտակելն աւելորդ եմ համարում. այս կարգի գործածութիւնների մէջ կը մասնիկով կազմութիւնների կարելիական եղանակ լինելը շատ պարզ է: Միայն այս պիտի դիտել, որ եթէ ներկան՝ կը գնամ և անցեալը՝ կը գնայի կարելիական նշանակութիւն ունին, նոյն նշանակութիւնը պահում է կը գնամ ձեն և այն ժամանակ, երբ իբրեւ ապառնի է գործածւում: Օրինակ՝ եթէ «Կողոպտողները շատ հեռու էին, նրանց ետևից կը հասներ միայն հրացանի գնտակը» ասացուածի մէջ կը հասներ ենթադրական է, իբրեւ՝ կարող էր հասնել, նոյն նշանակութիւնն անշուշտ մնում է, երբ ասւում է՝ «Կողոպտողները շատ հեռու են, նրանց ետևից կը հասնի միայն հրացանի գնտակը», իբրեւ՝ կարող է հասնել:

Այս բոլոր դէպքերում մեր ըղձական եղանակը կը մասնիկով համապատասխան է յունարէնի ըղձական եղանակի ու Praeteritum-ի. ձ մասնիկով գործածութիւններին իբրեւ *modus potentialis* կարելիական եղանակ, որ ուսերէնն արտայայտում է *мочь, статъ* բայերով կամ ապառնի ժամանակով *можетъ быть, пожалуйъ* բառերով: Նոր օրինակներ բերելուց խուսափում եմ արտաքին անյարմարութիւնների պատճառով: Միայն պէտք է նկատել, որ հայերէնում ևս, ինչպէս յունարէնում ըղձականն ձ մասնիկով, այս կարելիական եղանակը յաճախ գործ է ածւում քաղաքավարական արտայայտութեան համար, թէ մի եղելութիւն յայտնելու և թէ հրամայելու համար. օրինակ՝ Ասացէք, խնդրեմ, այս ի՞նչ կը նշանակէ: Ինչպէս կը յիշենք ընթերցողները, որոշուած էր... Այդ կարծիքի դէմ մենք կը նկատենք, որ... Դու այդ բանը կանես:

Անցնենք մեր այս ձևերի գործածութեանը պայմանական խօսքերի մէջ:

1. Պայմանը և հետևութիւնը կարող են պատկերացուել լոկ իբրեւ հնարաւոր, կարելի. այս դէպքում լատիներէնում թէ գլխաւոր և թէ երկրորդական խօսքերի մէջ դրւում է *conj. potentialis*. Հայերէնում սոյն գործածութիւնն ունի մեր ենթադրականը. *Si hos dicas (dixeris), erres (erraveris)* եթէ դու այդ կասես, կը սխալուես: Եթէ կը կամենամ, երկու ժամի մէջ բոլորիդ ինձ նման որսկաններ կը օրհնեմ.—Եթէ իմ ձեզ աւանդած դասը դուք կը տա

ձեր հղբայրներին, ոչ թէ հինգը, տասն անգամ հինգն էլ չեն վստահանալ ձեր գիւղին մօտ գալ (Պսօշ): Յունարէնում այսպիսի խօսքերի հետևութիւնը գրւում է *modus potentialis*, այսինքն ըղձական չն մասնիկով, ինչպէս հայերէնում ըղձական կը մասնիկով, իսկ պայմանը գրւում է *conj.*, կամ ըղձական առանց չն մասնիկի, ինչպէս սովորաբար և հայերէնում (եթէ այդ ասես, կը սխալուես):

2. Պայմանը և հետևութիւնը կարող են պատկերացուել իբրև ոչ-իրական: Այս դէպքում թէ պայմանը և թէ նրա հետևութիւնը գրւում են անցեալ. եթէ նա ժամանակ ունենար, գիրք կը կարդար (բայց որովհետև հունէր, չկարդաց): Այսպիսի գործածութեան մէջ մեր կը կարգալի անցեալը համապատասխանում է լատիներէնի *cunj. irrealis*-ին և յունարէնի *praeteritum*-ին չն մասնիկով, որ գործ է ածւում իբրև *modus potentialis* կարելիական, այս դէպքում իբրև *irrealis* անիրական:

Սակայն ինչպէս առաջին դէպքում՝ եթէ նա ժամանակ ունենայ, գիրք կը կարդայ, նոյնպէս և այս երկրորդ դէպքում՝ եթէ նա ժամանակ ունենար, գիրք կը կարդար—պայմանն ու հետևութիւնը միասին կազմում են մի ենթադրական զօդուած կամ խօսքերի ենթադրական կապակցութիւն (*hypothetische Satzgefüge*), որի մէջ գլխաւոր խօսքի իմաստը երկրորդական խօսքով պայմանի տակ է գրւում կամ ասւում է որոշ ենթադրութեամբ *υπόθεσις*, *Annahme*, *Voraussetzung*, *Bedingung*): Առաջին խօսքի մէջ՝ եթէ նա ժամանակ ունենայ, գիրք կը կարդայ՝ պայմանն ու հետևութիւնը պատկերացւում են իբրև հնարաւոր, կարելի ենթադրութիւն, և որովհետև ենթադրութիւնը լինում է ապագայի համար, ուստի որոշ պարագաների հիման վրայ սպասել կարելի է, որ կատարուի: Իսկ երկրորդ խօսքի մէջ՝ եթէ նա ժամանակ ունենար, գիրք կը կարդար—պայմանն ու հետևութիւնը պատկերացւում են իբրև անիրական, լոկ ենթադրութիւն, որովհետև ենթադրութիւնը լինում է մի անցեալի ժամանակի համար, իսկ անցեալ ժամանակի համար այլ ևս կարելի չէ սպասել, որ մի չկատարուած պայման իրագործուի: Կը կարդայ և կը կարդար ձևերն ուրեմն այս պայմանական գործածութիւնների մէջ եթէ տարբերւում են նշանակութեամբ, այդ ոչ թէ իրենց տարբեր հղանակից է առաջանում, այլ իրենց ժամանակից, ապառնի և անցեալ լինելուց: Այս պատճառով անցեալ ժամանակն է գործածւում նաև խօսքերի այնպիսի պայմանական կապակցութեան մէջ, երբ պայմանն ու հետևութիւնը, թէպէտ ապագայում ընկնելով հնարաւոր են, բայց ոչ սպասելի, ինչպէս՝ եթէ կարողանայի, ես վաղը ժամի 5-ին ճանապարհ կընկնէի: Դա լոկ ցանկացած են-

թաղրութիւն է ապագայի համար. խօսողն առաջուց գիտէ, որ դժուար թէ պայմանն իրագործուի. բայց և ով գիտէ, գուցէ իրագործուի:

Կը գնամ ձեն իբրև ապառնի՝ իր այս կարելիական կամ ենթադրական նշանակութիւնը պահում է և այն ժամանակ, երբ առանց պայմանի է գործածւում: «Եթէ վաղը լաւ եղանակ լինի, կը գնանք զրօսնելու». «Վաղը կը գնանք զրօսնելու»: Այս երկրորդ խօսքն իր եղանակաւորութեամբ չէ որ տարբերւում է առաջին խօսքից, այլ միայն նրանով, որ մինչ առաջին խօսքի մէջ գնալու ապագայ գործողութիւնը, ինչպէս տեսանք, հնարաւոր ուստի և սպասելի է, միայն որոշ, յայտնի պայմանով,— երկրորդ խօսքի մէջ նոյն գործողութիւնը դարձեալ հնարաւոր ու սպասելի է, բայց լոկ, առանց որեւէ պայմանի: Անշուշտ սրա հնարաւորութիւնն ևս այս կամ այն պայմանից է կախուած, բայց այդ պայմանները առանց յայտնուելու են թողած:

Թէ «վաղը կը գնանք զրօսնելու» խօսքը մի հնարաւոր, ենթադրական և ոչ իրական գործողութիւն է ցոյց տալիս, այդ շատ պարզ կերևի, երբ այդ ձևը հանդիպադրուի նոյն բայի սահմանական ապառնի ժամանակին՝ «Մենք վաղը գնալու ենք զրօսնելու»: Մէկին զգուշացնելիս ասում ենք՝ «Ճանապարհը վատ է, զգոյշ գնա, կընկնես», և ոչ թէ՝ «զգոյշ գնա, ընկնելու ես». որովհետև վերջին ձևով գործողութիւնը մտածւում է իբրև հաւաստի, ստոյգ, իրական, ուստի և, եթէ մէկն ընկնելու է, այլ ևս զգուշացնելն աւելորդ է. մինչդեռ կընկնես ձևով գործողութիւնը մտածւում ենք իբրև հնարաւոր, սպասելի որոշ հանգամանքների ու դրութեան մէջ, որով և զգուշացնելը շատ բնական ենք գտնում. «Ճանապարհը վատ է, զգոյշ գնա, կընկնես» խօսքով ուզում ենք ասել, թէ կարող է պատահել, որ ընկնես: Դա մի տեսակ զեղչուած ենթադրութեամբ խօսք է. զգոյշ գնա [ապա թէ ոչ, եթէ զգոյշ չգնաս], կընկնես— Բռնիր, չես տեսնում, որ ուշագնաց մարում է. հիմի կընկնի (Պոռ.)^{*}. իբր՝ եթէ չբռնես՝ հիմի կընկնի:

Նոյնպիսի եղանակաւորութեան խոշոր տարբերութիւն կայ և հետեւեալ ապառնիների մէջ, որոնցից մէկը կարելիական կամ ենթադրական է, միւսն իրական. Այդ բանը վերջը կը պարզուի (կարող է պարզուել). Այդ բանը վերջը պարզուելու է [իրապէս]. Այսօր մեզ մօտ հիւրեր կը գան (կարող են գալ, կարելի է գան). Այսօր մեզ մօտ հիւրեր են գալու (իրապէս գալու են, մտադիր են գալու): Ես վաղը կը գնամ նրա մօտ (կարելի է գնամ). Ես վաղը գնալու եմ նրա մօտ (իրապէս, մտադիր եմ գնալու): Տեսնեմ՝ երեսս կը բռնի, որ ասեմ. Այսպէս անելով ամենքի աչքից էլ կընկնես*:

^{*} Ամեն ապագայում ընկնող գործողութիւն ըստ ինքեան անհաստատ, անստոյգ է, որով և մենք կարիք չենք զգում շատ անգամ ապագայում դնելու

Յունարէնի անցեալը (praeter.) ունի և մի երկրորդական գործածութիւն ևս. այն է՝ բացի կարելիական և անիրական (potential և irrealis) նշանակութիւնից, գործ է ածուում նաև անորոշ կրկնութիւն ցոյց տալու համար խօսքերի ժամանակական և պայմանական կապակցութեան մէջ. գլխաւոր խօսքի մէջ անցեալն այս դէպքում դրուում է շատ անգամ *ἄν* մասնիկով (praeter. des Indicatives von unbestimmter Wiederholung): Սրա համապատասխան գործածութիւնը կայ և հայերէնում. ինչպէս՝ Երբ էլ գնայիր քաղաք, կը տեսնէիր նրան հրապարակում (փոխանակ ասելով՝ երբ էլ գնում էիր, տեսնում էիր): Այս գործածութիւնը արեւելեան աշխարհաբարում, աւելի ժողովրդական ձևով, կայ իբրև պատմական ժամանակ ևս անորոշ, կրկնութիւն ցոյց տալու համար: Բազմաթիւ օրինակներ կարելի է գտնել Մուրացանի, Բաֆֆու և մանաւանդ Պոռչեանի և ուրիշների երկերի մէջ. օրինակ՝ բայց այդպէս չէր հանգուցեալ հայրը. ամեն տարի աշնան ժամանակը կը գար: Մենք առաջուց կը լուսնայինք, կը մաքրեինք ոչխարները և սպիտակ, ձիւնափայլ հօտերը կը հաճեինք նրա առաջ և այլն (Բաֆֆի, Սամուէլ):

Այս ենթադրական կամ կարելիական նշանակութիւնը պահում են կը գնամ, կը գնայի ձևերը, երբ գործ են ածուում և իբրև երկրորդական խօսք. ինչպէս՝ Ես այն պատճառով չեմ ասում քեզ, որովհետև կարծում եմ, թէ կը գնաս, նրան կը յայտնես (և դու կարելի է գնաս, յայտնես): Ես այս պատճառով չասացի քեզ, որովհետև կարծում էի, թէ կը գնայիր. նրան կը յայտնէի: Այս երկու ձևերը, ինչպէս բերած օրինակներից երևում է, կատարելապէս նոյն հղանակաւորութիւն ունին: Առաջինը մի հնարաւոր ապառնի, իսկ միւսը՝ կը գնայի մի նոյնպիսի անցեալ է, բայց գլխաւոր խօսքի (կարծում էի) ժամանակի նկատմամբ դա ևս մի նոյնպիսի հնարաւոր ապառնի է: Այս պատճառով ենթադրական

մի իրական գործողութիւն, այլ աւելի պէտք ունինք մի ապագայ գործողութիւն ենթադրելու կամ անհրաժեշտ համարելու. ուստի այդպիսի գործողութիւնն արտայայտուում է աւելի հարկադրական (պիտի գնամ) և ենթադրական (կը գնամ) եղանակներով, քան սահմանակոծով (գնալու եմ): Ապագայի նկատմամբ սակայն մենք կարող ենք միշտ մի իրական միտք, դիտաւորութիւն ունենալ մի բան անելու. հէնց այդ պատճառով մեր սահմանական ապառնին (գնալու եմ), որ ցոյց է տալիս ներկայի նկատմամբ ապագայում ընկնող մի իրական գործողութիւն, միաժամանակ ցոյց է տալիս և մի ներկայի յարաձիգ, տևական վիճակ, դրութիւն կամ մտադրութիւն ապագայում մի գործողութիւն կատարելու. և այս սահմանական ապառնի ժամանակի իրականութիւնն առնուում է ոչ թէ ապագայի գործողութեան համար, որ ըստ ինքեան անստոյգ է. այլ ներկայի յարաձիգ վիճակի կամ մտադրութեան համար, որ և արտայայտուում է եմ բայով, որ սահմանական է:

անցեալի տեղ մեր լեզուի մէջ յաճախ բանում է ենթադրական ապառնին. խօսողն այդ ժամանակ ինքն իրեն դնում է գլխաւոր խօսքի ժամանակի մէջ. ինչպէս՝ ես կարծում էի, թէ մայրս կը բարկանայ, (փոխանակ՝ կը բարկանար). Արրահամ աղան կարծեց, թէ ճաշին կը գան, ճաշին էլ չեկան (Պոռշ.): Հեռացաւ խոստանալով գալ աղայի կոչին, երբ սա կը հրամայէ (Մուր.): Ամեն մարդ ընդհանուր խռովութեան մէջ սպասում էր, երբ թշնամին հեղեղի նման ներս կը թափուէր և սուրը ձեռին կը հանցիպէին իրենց պատուաւոր վախճանին (Բաֆֆի):

Այսպէս մեր կը գնամ և կը գնայի ձևերն, ինչպէս իրենց կազմութեամբ իրարուց անբաժան են, նոյնպէս և իրենց եղանակաւորութեամբ: Դրանք ըղձական են կարելիական նշանակութեամբ գործածուած. իսկ եթէ իբրեւ առանձին եղանակ առնուին *modus potentialis* կարելիական եղանակ են, որ ես աւելի յարմար եմ համարում ենթադրական կոչել. որովհետեւ մեր այս բառն իր սովորական գործածութեամբ թէ կարելիական նշանակութեանն է յարմարւում և թէ այդ ձևերի պայմանական գործածութեանը, — լինին կարելիական նշանակութեամբ, թէ անիրական (*irrealis*). մի դէպքում հնարաւոր ենթադրութիւն, միւս դէպքում լոկ ենթադրութիւն*:

Մի անգամ որ մեր պիտի բառով և կը մասնիկով կազմուած ձևերը սահմանական եղանակից դուրս գալով՝ առնւում են իբրեւ առանձին առանձին եղանակներ, ըստ ինքեան հասկանալի է, որ մեր խոնարհման դժուարութիւնը որոշ չափով վերանում է: Բաւական է սովորել միայն ըղձականի ութ ձևերը՝ գնամ, գնայի. գնացած լինիմ, գնացած լինէի. գնալիս լինիմ, գնալիս լինէի. գնալու լինիմ, գնալու լինէի: Հարկադրականի և ենթադրականի ութ ութ ձևերը առանձին առանձին սովորելու կարիք չկայ, այլ այն միայն պէտք է իմանալ, որ պիտի բառը և կը մասնիկը դրուելով ըղձականի վրայ՝ կազմում են հարկադրականի և ենթադրականի ութ ութ ձևերը, որոնք համապատասխան են ըղձականի ութ ձևերին. պիտի գնամ, պիտի գնայի. գնացած պիտի լինիմ, գնացած պիտի լինէի և այլն. կը գնամ, կը գնայի. գնացած կը լինիմ, գնացած կը լինէի. գնալիս կը լինիմ, գնալիս կը լինէի և այլն:

*) Մի նկարագրութիւն սակայն պիտի անել: Ինչպէս սահմանական եղանակի համար վերնում տեսանք, որ մի որևէ բառով կարող է ստանալ հարկադրական կամ կարելիական նշանակութիւն (նա գուցէ գալիս է), նոյնպէս և այս ենթադրական եղանակը կարող է որևէ բառով հարկադրական նշանակութիւն ստանալ, ինչպէս՝ նա անպատճառ կը գայ, նա անհրաժեշտօրէն կը գայ: Խօսքն այս դէպքում տրամաբանօրէն հարկադրական է, թէպէտ և ձևով ենթադրական է:

Ամբողջ ճասնելվեց ձեւի նշանակութեան համար, ըստ եղանակի, բաւական է ուրեմն իմանալ միայն երկու տերմին՝ հարկադրական և ենթադրական. իսկ դրանց կազմութեան համար միայն պիտի բառը և կը մասնիկը: Եթէ աշակերտն, օրինակ, գիտէ, որ գնալիս լինէի կատարուող կերպի ըզձական անցեալ է, նա ինքն արդէն կարող է կազմել և իմանալ որ գնալիս կը լինէի կատարուող կերպի ենթադրական անցեալ է. իսկ գնալիս պիտի լինէի կատարուող կերպի հարկադրական անցեալ է:

Սակայն այդպէս վարուելու էլ կարիք չկայ. կարելի է պիտի գնամ, պիտի գնայի և կը գնամ, կը գնայի ձեւերը նոյն իսկ չառնել խոնարհման մէջ, այլ միայն գնամ, գնայի ձեւերը: Եւ այս էլը լինէր աւելի բանաւոր, որովհետեւ քերականօրէն բառաձեւի գաղափարը պահանջում է, որ իբրեւ բայի ձեւը վերցուեն միայն պարզ ժամանակները: Իսկ թէ այդ բառաձեւերը որ և է եղանակիչ բառով կամ մասնիկով նոր եղանակաւորութիւն են առնում, դա բառաձեւի հետ առնչութիւն չունի: Եթէ «գուցէ գայ», «թերեւ գայ» կապակցութիւնների մէջ գայ բայի եղանակն, ըստ ձեւի, փոխուած չի համարւում գուցէ, թերեւս բառերի պատճառով, թէպէտեւ սրանք բային տալիս են կարելիական նշանակութիւն, — նոյնը պիտի ասել և «պիտի գայ», «կը գայ» կապակցութիւնների համար: Գայ բայն այս դէպքում ևս իր ձեւով մնում է նոյն ըզձականը, միայն պիտի. կը բառը կամ մասնիկը տալիս են նրան հարկադրական կամ կարելիական բնաւորութիւն: Տեսնենք այս եղանակիչ պիտի բառն և կը մասնիկն առանձին առանձին:

Պիտի եղանակիչը պարզաբար պիտիմ բայի եզակի 3-րդ դէմքն է և մենակ իբրեւ անկախ բայ էլ է գործածւում. ինչպէս՝ Ասողին էլ լսող պիտի. Այսօր պիտի գնալ և տեսնել նրան: Դա նշանակում է՝ հարկաւոր է, պէտք է, ուստի պիտի գնամ, պիտի գնաս և այլն կապակցութիւնների տեղ և նրանց նշանակութեամբ գործ են ածւում նաև՝ պէտք է գնամ, պէտք է գնաս և այլն: Պիտի գնամ և այլն ձեւերը ծագած են պիտի որ գնամ և այլն ձեւերից: Այսպէս գործ է ածւում յաճախ միջնադարեան աշխարհաբարում: Դրանից սղումով առաջացել է բարբառային պիտ՝ որ գնամ, պիտ՝ որ գնաս և այլն, կամ, ինչպէս սովորական է ժողովրդական լեզուի մէջ երկրորդական խօսքն առանց որ շաղկապի դնել՝ պիտի գնամ, և վերջապէս շրջումով կամ բառերի ազատ դասաւորութեամբ՝ Ես այսօր տուն պիտի գնամ. Ես այսօր պիտի տուն գնամ. Ես պիտի այսօր տուն գնամ և այլն:

Սակայն ինչքան էլ պիտի գնամ ձեւը սկզբնապէս նոյն է պիտի որ գնամ ձեւի հետ, այժմեան լեզուի մէջ այդ երկուսի տարբերութիւնը խոչնդ է: Երկրորդ ձեւի մէջ պիտի անկախ բայ է և

քերականօրէն գերադաս բայն է, իսկ գնամ նրա լրացումը. մինչ առաջին խօսքի մէջ պիտի բառը կորցրել է անկախ բայի և նոյն իսկ բայական նշանակութիւնը. «Ես այսօր երեկոյեան քաղաք պիտի գնամ» խօսքի և նմանների մէջ այլ ևս «Ես այսօր երեկոյեան» մասը չենք գիտակցում իբրեւ լրացում եղակի 3-րդ դէմքի պիտի բայի, իբրեւ՝ պիտի որ ես այսօր երեկոյեան քաղաք գնամ: Միւս կողմից պիտի գնամ ձևի մէջ պիտի բառը չի պահում իր բուն նշանակութիւնը, որ է՝ հարկաւոր է. ես պիտի տուն գնամ խօսքը այլևս չենք մտածում իբրեւ՝ հարկաւոր է որ ես տուն գնամ, ինչպէս որ հասկանում ենք հետեւեալ խօսքերը՝ Պիտի որ մինք այս խաչը հանէք. Պիտի որ ինչ հունար ունենայ՝ չպահի. Պէտք է որ մի քանի բարեկամներ օգնական լինիք (Պոօշ.): Վերջին խօսքերի մէջ շեշտում է հարկաւոր, պէտք լինելը, ուստի և անցեալը լինում է պիտի եր (պիտէր). օրինակ՝ Պէտք չէր որ մեր միրքի տակօղն էլ անցնէիք (Պոօշ.). մինչդեռ պիտի գնամ կապակցութիւնը ցոյց է տալիս անհրաժեշտ, հարկադրական գործողութիւն և պիտի բառը դարձել է բայի մակբայական լրացում, որ դրուելով, բայի վրայ՝ միայն եղանակաւորում է այն, գործողութեանը տալով հարկադրական նշանակութիւն: Այս պատճառով և պիտի բառը ոչ միայն բայից առաջ է դրւում, այլ երբեմն և յետոյ՝ գնամ պիտի, գնաս պիտի,—և նոյն իսկ սղւում և ստանում է պիտ, բարբառներում նաև տի, տը, տ՝ ձևերը, ինչպէս՝ Մարդ մի անգամ պիտ մեռնի. (տի բերեմ, տը բերեմ, տ՝ասեմ),—մի շրջում և սղւում, որ չէր կարող տեղի ունենալ, եթէ պիտի բառը պահած լինէր իր անկախ բայական նշանակութիւնը:

Այսպէս ուրեմն այսօրուայ լեզուի՝ պիտի գնամ, պիտի գնայի ձևերի մէջ պիտի բառը մի քարացած բայական ձև է, ճիշտ ինչպէս գուցե բառը: Այս դէպքում, հասկանալի է, ինչպէս գուցե դրւում է մակբայների մէջ, նոյնպէս և այս պիտի բառը պիտի դրուէր:

Պիտի բառը մակբայ գնելուն չի խանդարում այն, որ պիտի գնամ կազմութեան բացասականը լինում է թէ պիտի չը գնամ և թէ չը պիտի գնամ, այսինքն բացասականը կարող թէ խոնարհուող բայի վրայ դրուել և թէ պիտի հարկադրականի վրայ: Եւ այս հասկանալի է, թէ ինչո՞ւ: Պիտի ծագած լինելով բայից, ընդունում է չը բացասականը, ինչպէս և նոյն կարգի գուցե բառը. «Գուցէ գնամ» կապակցութեան բացասականը լինում է՝ թէ գուցե չգնամ, թէ մի՞ գուցե գնամ: Անշուշտ իմաստով այս կրկին բացասական ձևերը տարբեր են. պիտի չգնայի ձևի մէջ բացասում է ինքը գործողութիւնը և առնւում է բացասական գործողութեան անհրաժեշտութիւնը. մինչ չպիտի գնայ ձևի մէջ ոչ թէ անմիջապէս

գործողութիւնն է բացասուում, այլ գործողութեան անհրաժեշտութիւնը: Նմանապէս և զուցե չգնայ խօսքի մէջ առնուում է մի բացասական գործողութեան հնարաւորութիւնը, մինչ մի՛ զուցե գնայ ձևի մէջ անմիջապէս գործողութիւնը չի բացասուում, այլ գործողութեան եղանակիչ զուցե բառի նշանակութիւնը, այն տարբերութեամբ պիտի բառից, որ վերջինս սահմանականից ծագած լինելով՝ դատողութեան խօսքի չը բացասականն է առնուում, մինչեւ զուցե բառը, ծագած լինելով գրաբարի ցանկութեան եղանակից, մի՛ արգելականն է անում. որով մի՛ զուցե գնայ խօսքը ոչ թէ ըղձականի կարելիական նշանակութեամբ է առնուում, այլ ցանկութեան նշանակութեամբ. խօսողը չի ցանկանում նրա գալը:

Մի անգամ որ պիտի բառը դրուէր իրրեւ առանձին եղանակիչ բառ կամ մասնիկ, այն ժամանակ խոնարհման միջից դուրս կը ձգուէին պիտի գնամ, պիտի գնայի կազմութիւնները և բաւական կը լինէր միայն բացատրել, թէ ըղձականի վրայ աւելանալով պիտի, պիտի բառը կամ մասնիկը, բային տալիս է հարկադրական եղանակի նշանակութիւն, ինչպէս և զուցե բառը՝ կարելիական նշանակութիւն. գնամ, տեսնեմ (ցանկութեան իմաստով) պիտի գնամ տեսնեմ (հարկադրական), դուցէ գնամ, տեսնեմ (կարելիական). երեք դէպքերում էլ, սակայն, բայն իր քերականական բառաձևով նոյնն է, ըղձական է:

Նոյնը կարելի է ասել և կը մասնիկի և կը գնամ, կը գնայի ձևերի համար:

Այս մասնիկի ծագումն Այտնեանը (Պեր. եր. 76 հտ.) բացատրում է կայ ու բառերից, որոնք իրրեւ աւելադրութիւն դրուելով գրաբարի սահմ. ներկայի և անցեալի վրայ, որ արդէն ստորագասականի նշանակութիւն էին՝ ստացել, բային տուել են սահմանականի բնաւորութիւն. կայ ու տեսնեմ (որ յետոյ դարձել է կու տեսանէ, կը տեսանէ) միայն սահմանական կարող էր հասկացուել, քանի որ կայ բայը միայն սահմանական է: Այս բացադրութիւնը, ինչքան սրամիտ է, սակայն չի հաստատուում. մի երկու օրինակները, որ նա բերում է գրաբարից, բաւական չեն: Այսպիսի մի գործածութիւն, որ այժմ ընդհանրացած է լեզուի մէջ, չէր կարող լեզուից բոլորովին վերացած լինել. եթէ մի ժամանակ ասուել է՝ կամ ու լսեմ, կաս ու լսես, կայ ու լսէ, կանք ու լսենք, կաք ու լսէք, կան ու լսեն. կայի ու լսէի, կայիր ու լսէիր և այլն, այսինքն կամ բայն ևս խորհուել է լսեմ բայի հետ, դրա հետքերն այժմեան բարբառների մէջ եթէ չերևային, միջնադարեան աշխարհաբարում գոնէ պիտի երևային. բայց այնտեղ ևս այն մի երկու կապակցութիւններն են միայն երևում, որ և բերել է Այտնեանը. այնպէս որ պէտք է կարծել, որ Միքիթար Հերացու

«կանք ու տեսանենք», «կայ և ուրդի» գործածութիւնները բացառիկ դարձուածներ են, ինչպէս և՛ կայ մնայ, կայ պահի կապակցութիւնները:

Կը մասնիկը, որ երևում է նաև կո, կու, կա, կի ձևերով այժմ դրւում է բայից առաջ և նրանից անբաժան. բայց բարբառներում երբեմն անջատւում էլ է բայից՝ կը վէր ընկնի, կը ցոյց տայ: Ուրիշ բարբառներում դրւում է բայի ետեից՝ պահեմ կը, ասեմ կը. նոյն իսկ մի անգամ մի քանի բայի ետեից՝ Նղիան նստի, համբառնայ կը երկինք: Երբեմն կրկնութեամբ էլ է ասւում՝ կը պահեմ կը, կ'ուտէ կը: Միջնադարեան աշխարհաբարում երևան է գալիս նաև կոյ ձևով, (վերջի յ-ն, երևի, աւելացած է միայն գրութեան ձևով) և բաւական էր համարւում մի անգամ միայն դնել մի քանի բայերից առաջինի վրայ. ինչպէս՝ Թագաւորին փեսայն բժշկութիւն կոյ առնէ և դեռ հանէ (Մառ. ժողով, Առակաց. Բ. 135), ինչպէս այժմ պիտի եղանակիչը՝ պիտի գնամ, տեսնեմ նրան:

Այս մասնիկը, ինչպէս տեսանք, դրուելով ըղձականի վրայ՝ արեւելեան աշխարհաբարում ճիշտ նոյն կարելիական նշանակութիւնն է տալիս բային, ինչ որ յունարէնի ἄν մասնիկը, որին գործածութեամբ հաւասար էχέ, χέν, χα մասնիկը: Յունարէնում ἄν կամ χέ մասնիկը դրւում է անմիջապէս բայից յետոյ, բայց երբ բայից առաջ կայ մի կարևոր բառ, ինչպէս մի բացասութիւն կամ հարցական, դրւում է բայից առաջ. երբեմն նաև կրկնուած ձևով է գործածւում:

Յունարէնի χέ մասնիկը հնդեւրոպական ծագում ունի. Բրուգմանի Համառօտ համեմատ. քերականութեան մէջ¹ գտնում ենք այդ մասին. «*qom *qeḡ *qā ևայլն. հին հնդկ. kām kam, յուն. χέν χε χα. հին եկ. սլաւ. КЪ, ուսւ.—КО.—КА». իսկ գործածութեան համար ի միջի այլոց՝ «հին հնդկերէնում դրւում է հրամայականի ետեից, ինչպէս և ուսկերէնում (скажи-ка). Հին հնդկերէնում նաև սահմանական գլխաւոր խօսքերի մէջ: Սրան մօտիկ են և յունարէնի մասնիկները (χέ, χέν) կարելիական ըղձականի հետ» (opt. patent.):

Արդ մեր կը մասնիկը,—որ անշեշտ մնալով սղուած է կո, կու, կի, կա ձևերից, ինչպէս երևում է այդ մասնիկը մեր բարբառներում,—թէ նշանակութեամբ և թէ հնչիւնով նոյնանում է *qom, *qem, qā մասնիկի հետ, այսինքն թէ գործածութեամբ և նշանակութեամբ և թէ ծագումով նոյն է ինչ որ յունարէնի χέ մասնիկը: Դրանով ըղձական եղանակը՝ գնամ, տեսնեմ՝ դառնում է կարելիական ըղձական կը գնամ, կը տեսնեմ:

1) Brugmann, K. vergl. Gramm. եր. 620.